Արձանագրություն 3

<<ՀՀԿԳՆԳՀԾՁԲ-17/2>> ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով գնման գործընթացի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 25.09.2017 թ.
ժ.10:30

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Մ. Կարախանյան /գնահատող/
Հանձնաժողովի անդամ՝ Ա. Խաչատրյան /գնահատող/
Հ. Գրիգորյան /գնահատող/
Ա. Դանիելյան /բացող/
Մ. Պողոսյան /բացող/
Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Մարգարյան

1. Որակավորման փաստաթղթերի գնահատման ընթացքում արձանագրված անհամապատասխանությունների մասին
(Մ. Կարախանյան)

1.1 <<Պանտեռա Սիքյուրիթի>> ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել են որակավորումը հիմնավորող փաստաթղթերը:

1.2 ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեից սահմանված ժամկետում ստացվել է համապատասխան եզրակացությունը:

1.3 Հանձնաժողովի կողմից Մասնակցի ներկայացրած փաստաթղթերի ուսումնասիրման արդյունքում արձանագրվեցին հետևյալ անհամապատասխանությունները.

- Ներկայացված 15.01.2015թ ''Ձեռնարկությունների ինկուբատոր'' հիմնադրամի հետ կնքված թիվ ՁԻՀ-ՊԸԾՁԲ-15/2 պայմանագրով /այսուհետ՝ Պայմանագիր/ նախատեսվել է, որ ծառայությունները կմատուցվեն ֆինանսական միջոցների առկայության դեպքում՝ համապատասխան համաձայնագիր կնքելու օրվանից հաշված 365 օր: Նշված ժամանակահատվածի համար Պայմանագրի ընդհանուր գումարը կազմել է 9840000 ՀՀ դրամ, յուրաքանչյուր ամսվա համար նախատեսելով՝ 820000 ՀՀ դրամ:
- Նշված Պայմանագրի շրջանակներում 16.01.2015թ կնքվել է համաձայնագիր, ըստ որի Պայմանագիրն ուժի մեջ է մտել 16.01.2015թ և նախատեսվել է, որ ծառայությունները մատուցվելու են մինչև 31.12.2015թ /11.5 ամիս/, իսկ 01.01.2016թ-16.01.2016թ /0.5 ամիս/ կմատուցվեն ֆինանսական միջոցների առկայության դեպքում՝ լրացուցիչ համաձայնագրի հիման վրա: Միաժամանակ համաձայնագրով սահմանվել է, որ Պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցը փոխարինվում է համաձայնագրով հաստատված նոր տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, ըստ որի 12 ամսվա փոխարեն նախատեսվել է 11.5 ամիս, սակայն ընդհանուր Պայմանագրի գինը թողնվել է անփոփոխ՝ 9840000 ՀՀ դրամ գումար, միավորի գինը կրկին նախատեսելով 820000 ՀՀ դրամ:
- Նշված Պայմանագրի շրջանակներում 30.12.2015թ կրկին կնքվել է համաձայնագիր, ըստ որի Պայմանագրի ժամկետը երկարաձգվել է մինչև 14.02.2016թ, իսկ Պայմանագրի գինը նվազել է և կազմել է ընդհանուր 9020000 ՀՀ դրամ, միավորի գինը կրկին թողնելով անփոփոխ՝ 820000 ՀՀ դրամ: Միաժամանակ համաձայանգրով նախատեսվել է, որ Պայմանագրի 3.6 կետը լրացվում է նոր բովանդակությամբ՝ երկրորդ պարբերությամբ, այն դեպքում երբ Պայմանագրի 3-րդ գլուխը ավարտվում է 3.4 կետով:

- Ներկայացված հանձնման-ընդունման արձանագրություններով /16.01.2015թ-31.01.2016թ ժամանակահատվածի համար/ փաստացի մատուցված ծառայությունների գումարը կազմել է 10250000 ՀՀ դրամ:
- Ըստ ներկայացված հաշիվ-ապրանքագրերի, որոնք դուրս են գրվել 31.01.2015թ-25.12.2015թ ժամանակահատվածում և որտեղ բացակայում են վերջիններիս դուրս գրման հիմքերը /կնքված պայմանագրի համարը և ամսաթիվը/, ծառայության մատուցման գումարը կազմել է 10326451 ՀՀ դրամ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

1.4 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ թիվ 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 47-րդ կետը առաջարկել <<Պանտեռա Սիքյուրիթի>> ՍՊԸ-ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի նիստը շարունակվեց 27.09.17թ ժամը 10:30-ին:

2. Արձանագրված անհամապատասխանությունները շտկելու և հայտը գնահատելու մասին

(Մ. Կարախանյան)

2.1 <<Պանտեռա Սիքյուրիթի>> ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում շտկվել են արձանագրված անհամապատասխանությունները:

2.2 Հիմք ընդունելով հանձնաժողովի կողմից ներկայացված գնահատման թերթիկները <<Պանտեռա Սիքյուրիթի>> ՍՊԸ-ի հայտը գնահատել բավարար և հայտարարել 1-ին տեղ զբաղեցնող /ընտրված մասնակից/:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

2.3 Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հիմք ընդունելով ''Գնումների մասին'' ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ կետը՝ առանց անգործության ժամկետ սահմանելու, ընտրված մասնակցին, էլեկտրոնային ձևով գնումների կազմակերպման կարգին համապատասխան՝ ARMEPS համակարգով, ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

Գնահատող հանձնաժողով՝

_____ Մ. Կարախանյան /նախագահ/

_____ Ա. Խաչատրյան

_____ Հ. Գրիգորյան

_____ Ա. Դանիելյան

_____ Մ. Պողոսյան

_____ Ա. Մարգարյան /քարտուղար/